

Հայ կաթողիկէ բարձրաստիճան եկեղեցականներ՝ Մատթէոս Սարի, երբեմն կաթողիկոս Սոյ եւ Պատրիարք Կ.Պոլսոյ, Գրիգոր Արքեպ. Եղեւսիոյ, Գէորգ Բենիամին, Եպիսկոպոս Եղեւսիոյ, Յովակիմ Զուղայեցի, Արքեպիսկոպոս Էջմիածնի, եւ Յարութիւն Անաստաս, Արքեպ. Կեսարիոյ Պաղեստինոյ։ Այս նիստերու մէջ իւրաքանչիւր Հայրապետ ներկայացուած խնդիրները քննելէն ետեւ՝ իր յատուկ լեզուաւ վկայութիւն կու տայ իր համոզման համեմատ, եւ խնդրագիր մը կը կարդայ բարձրաձայն առ Ս. Բահանայապետն, որ հաճի յիշեալ չորս անձինքներու սրբութիւնը հրատարակել ի լուր աշխարհի։

Մեր հինգ Հայրապետներուն կարգացած չորս չորս խնդրագիրները հրատարակուած են հայերէն բնագրով (չատ սխալագիր) եւ լատին թարգմանութեամբ՝ յիշեալ Համագումարին պաշտօնական արձանագրութեան մէջ որ տպագրուած է 1720ին Վատիկանեան տպարանը (J. Chiapponi, Acta canonizationis Sanctorum Pii V. Pont. Max., Andrea Avellini, Felicis à Cantalicio, et Catharinae de Bononia, ex Typographia Vaticana.) Մատթէոս կաթողիկոս կը գրէ (էջք 102, 129, 159 եւ 194) «Ես Մատթէոս կաթողիկոս որդի Սանուկպալի (անշուշտ՝ Մանուկ Պալի) Պատրիարք Կոստանդինուպոլսոյ։ Մեծ պատիւ է...» եւ այլն։ Գրիգոր Արքեպ. կը գրէ (էջք 105, 131, 159 եւ 196). «Հայցօղ շնորհացս հնազանդագոյնեղ ծառայ վեհապետին Հռօմայ՝ Տէր Գրիգոր Ար-